ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2.6-2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ

Ս.Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

Հ.Սահակյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Լ.Բասմաչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Զ.Հայրապետյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պայմանագրի կնքման փուլի քննարկում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ Mulberry 2.0 համակարգում՝ «Նիկոն» ՍՊԸ-ի հետ կնքվող դրամաշնորհային պայմանագրի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի աջակցող ստորաբաժանումների կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

Նշվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության՝ «Նիկոն» ՍՊԸ-ի հետ կնքվող դրամաշնորհային պայմանագրի շրջանակում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրով նախատեսված վճարումների ժամանակացույցը

նախատեսում է 8 ամսվա կտրվածք, ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ֆինանսական և հաշվապահական հաշվառման և իրավաբանական վարչությունները առաջարկել են՝ կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը վերանայել, մասնավորապես ծրագրի տևողությունը նախատեսել նախկին 9 ամսվա փոխարեն 8 ամիս: Հանձնաժողովը, ընդունելով աջակցող ստորաբաժանումների առաջարկությունը, առաջարկեց դիմել հաղթող կազմակերպությանը՝ վերանայելու և շտկելու իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը՝ ծրագրի տևողությունը նախատեսելով նախկին 9 ամսվա փոխարեն 8 ամիս:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 2.6 կետով նախատեսված **«Լուսանկարահանում, տեսանկարահանում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված **«Նիկոն» ՍՊԸ-ին՝** վերանայելու և շտկելու իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը՝ ծրագրի տևողությունը նախատեսելով նախկին 9 ամսվա փոխարեն 8 ամիս:

2. **«Նիկոն» ՍՊԸ-ի** հետ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի կնքման գործընթացը շարունակել շտկված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____